ԾՆԾՂԱ. ՆՎԱԳԱՐԱՆ ԵՎ ՄՈԳԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Հ. Վ. ՊԻԿԻՉՅԱՆ

Հայաստանում տարածված հնադույն աղմկային-հարվածային նվագարանների ընտանիքին է պատկանում ծնծղան, որն իր տարատեսակներով կենցաղտվարել է պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական գոտիներում։ Բացի երաժշտագիտության մեջ ընդունված իր բուն՝ մեղեդու ռիթմիկ պատկերն ընդգծող նշանակությունից, ծնծղան ձեռք է բերել այլևայլ ինքնատիպ դեր և նշանակություն, որն էլ ի մի ներկայացնելու էթնոերաժշտագիտական փորձ է սույն հետազոտությունը։

Մասնագիտական գրականության մեջ հիշատակված ծնծղաների նկարագրություններից բերենք Մ. Օրմանյանի համեմատաբար ամբողջական գրառումը, ըստ որի ծնծղան է «...պղնձե ձայնական գործիք, տափակ ու կլոր, իբր 40 հարյուրամետր տրամագծով, մեջտեղը գոգավորված, որուն ետևեն կաշիե օղակով կբռնվի, և երկու ծնծղա երկու ձեռքով իրարու բախելով սաստիկ ու դղրդացնող ձայն կհանե, որ իրավամբ գրոց մեջ ալ զոռանջել կոչված է։ Ծնծղաներն ի հնուց անտի ծանոթ են, նույնիսկ արտաքին նվագախումբերու մեջ ալ ընդունված են։ Ծնծղաներուն բոլոր առավելությունը պղնձին այնպիսի խառնուրդ տալու մեջ է, որ սպասված ձայնը տա»[1]։ Հեղինակը տարբերակում է նաև նվագարանի մի այլ տարատեսակ. «Ծնծղակ՝ փոքր, պղնձե գործիք, կիսագունդ զանգակի ձևով և վրայի կողմեն բռնելու կոթով մը, որ պղնձե թաթով դուրսի կողմեն կբախվի և ձայները ճշդելու և կանոնավորելու կծառայե։ Ռամկորեն զիլ անունով ճանչցված է, և մեր եկեղեցիներուն մեջ տարածված կիրառություն ունի»[2]։ Իսկ «Բառարան Սուրբ գրոց»-ում կարդում ենք. «Ծնծղա, երաժշտական գործի, կազմյալ երկու պղնձի տախտակներե, զոր զարնվելով ընդ իրարս, կհանեն թրթռակ և սուր ձայն։ Սաղմոսեն ՃԾ. 5. կտեսնվի, թե կար ձեռաց և մատանց ծնծղա։ Ծնծղայք կգործածվեին ի տաճարին և հասարակաց զվարճութեանց մեջ..., ինչպես սովորություն է զարդիս առ Հայս»[3]։

Գրականության տվյալների[4], Հայաստանի պատմության և ազգագրության թանգարանների հավաքածուների[5], ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններում գիտարշավների ժամանակ մեր գրանցած նյութերի հիման վրա ծնծղաներն ըստ ձևի տիպաբանելիս կարելի է տարբերակել երեք հիմնական խումբ՝ հարթ, կիսագնդաձև և գմբեթաձև, որոնք ըստ չափի լինում են մեծ, միջին և փոքր։ Ծնծղաները հնչում են առանձին կամ զույգով։ Առանձին

---

1 *Մ. Օրմանյան. Միսական բառարան. Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 143։*

2 *Նույն տեղում։*

3 *Բառարան սուրբ գրոց. Կ. Պոլիս, 1881, էջ 255։*

4 К. А. Вертков, Г. Благодатов, Э. Язовицкая. Атлас музыкальных инструментов народов СССР, М., 1963; Музыкальная Энциклопедия. М., 1981; Музыкальный Энциклопедический словарь, М., 1990; А. К. Кочаряи. Ударные и духовые народные музыкальные инструменты в Армении. Ереван, 1965 (автореферат).

5 *ՏԵ՛ս Հայաստանի պատմության պետական թանգարանի (այսուհետև՝ ՀՊՊԹ), № 2742, 2739, 2738, 2747, 2740, 2745, 2737, 2744, 2735, 2736, 2743, 2741, 2734, 2660, 2663, 2746, 2650—2652, 2654, 2655—2659, 4254, 4255, 9294, 9430 նվագարանները, ինչպես նաև Հայաստանի ազգագրության պետ. թանգարանի (այսուհետև՝ ՀԱՊԹ), № 1160—1162, 1352, 3264/2, 3264/3, 3264/6.ա,.բ, 4259/2 նմուշները։*

(միակ) ծնծղաները նվագում են թաթով, ձողիկով կամ ճիպոտով։ Մ. Օրմանյանի վերոհիշյալ աշխատության մեջ թաթը ներկայացվում է որպես «...բախելու գործիք մը՝ որ կգործածվի երգեհոնեն, զանգակեն ու ծնծղայեն ձայն հանելու համար։ Թաթը ձեռքի վրայ գործածվելիք և զարնելու համար՝ քիչ ու շատ մուրճի նման գործիք մըն է»[6]։ Ձողիկը՝ մետաղյա, իսկ ճիպոտը՝ փայտե երկարավուն, գլանաձև հարմարանքներ են, որոնք կիրառվել են նույն նպատակներով։ Զույգ ծնծղաները հնչեցնում են միմյանց հարվածելով։

Իսկ այժմ անդրադառնանք ծնծղաների տիպաբանությանը.

Հարթ ծնծղաներն են՝

ա) Մեծ (միակ), որը ժողովրդախոսակցական լեզվում կոչվում է նաև արև, դամ, երգեհոն, ցնձա, ցընձղա, ցըմցըմ։ Տրամագիծը՝ 30—50 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 2747, 2746, 9430 և 9294 նվագարանները)։

բ) Մեծ (զույգ), փոքր-ինչ ուռուցիկ գլխիկով։ Կոչում են նաև ցըմպապա, երգեհոն, ցընձղա, ցնծա։ Տրամ.՝ 30—47 սմ, գլխիկի բարձրութ.՝ 3—5 սմ։

գ) Միջին չափսի (միակ և զույգ), փոքր-ինչ ուռուցիկ գլխիկով՝ ցընցղա, երգեհոն, ծնծաղ, ցընծղներ։ Տրամ.՝ 17—30 սմ., գլխիկի բարձրութ.՝ 1,5—3 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 2735—2745 նվագարանները)։

դ) Փոքր չափսի (միակ և զույգ), փոքր-ինչ ուռուցիկ գլխիկով, որի վրա մատներին հագցվող կաշեփոկեր կան։ Հայտնի են նաև որպես մատների ծնծղա, զիլ, զիլփարա, չալփարա, ծընգծընգիկ։ Տրամ.՝ 5—15 սմ, գլխիկի բարձրութ.՝ 0,5—1 սմ (տե՛ս ՀԱՊԹ, № 3264/2, 3264/3)։

ե) Կենաց ծառի տեսքով բռնակավոր ծնծղա, ճյուղերին հինգ զույգ զիլեր, բռնակները հիմքի մասում միացած են կամ կազմում են երկու առանձին մաս, նվագում են և՛ միմյանց հարվածելով, և՛ թափահարելով։ Անվանվում են նաև զիլի մաշա, ունելի, ցնցելի, ծնծղուկք։ Ծնծղաներից յուրաքանչյուրի տրամ.՝ 5—7 սմ, գլխիկի բարձրութ.՝ 0,5 սմ, ծառի ընդհանուր բարձրութ.՝ 25—45 սմ (տե՛ս ՀԱՊԹ, № 3264/6, 1353, 4259)։

զ) Բռնակավոր ծնծղա, փայտե ձվաձև կամ ուղղանկյունաձև շրջանակի կենտրոնում ամրացված ձողիկին զույգերով շարված զիլերով, նվագում են թափահարելով։ Կոչվում է նաև ունելի, մաշա, ցնցելի, ցընցրխ, շրխկըրդիկ, շրխկըրդան, ձինծղուկք։ Զիլերից յուրաքանչյուրի տրամ.՝ 3—7 սմ, գլխիկի բարձրութ.՝ 0,5 սմ, ընդհանուր բարձրութ.՝ 17—25 սմ (տե՛ս ՀԱՊԹ, № 3264/1)։

Կիսագնդաձև ծնծղաներն են՝

ա) Փոքր չափսի (միակ և զույգ), գագաթին կաշեփոկի համար բացված անցքով։ Հայտնի են նաև որպես երգեհոն[7], աղչիկ[8], ծնծղակ, ծնծղուկ, ծնծըզիկ, ծիծեռնակ։ Տրամ.՝ 7—12 սմ, բարձրութ.՝ 3—6 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 2650, 2651, 2652, 2654—2659, 2661, 4254)։

բ) Բռնակավոր (միակ և զույգ), փոքր-ինչ երկարավուն, սրածայր բռնակով։ Անվանում են նաև՝ երգեհոն, մանչ[9], ծնծղակ, ցընձղակ, ձընձղակ։

---

6 Մ. Օրմանյան. նշվ. աշխ., էջ 121։

7 Ինչպես արդեն նկատելի է, Հայաստանում ծնծղաներին շատ հաճախ անվանում են նաև երգեհոն։

8 Ծնծղայի այս անվանումը պայմանավորվում է նվագարանի գլխիկին կամ բռնակի ծայրին արված շրջանաձև անցքով։

9 Անվանումը կապվում է ծնծղայի բռնակի ձևի հետ։ Մանչ և աղչիկ տիպի ծնծղաները մեծ տարածում ունեն մոգական արարողությունների ժամանակ, որոնց ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև։

Տրամ.՝ 8—12 սմ, բարձրութ.՝ 5—6,5 սմ, ընդհանուր բարձրութ.՝ 15—18 սմ։

գ) Բռնակավոր (միակ և զույգ), երկար, շրջանաձև ծայրով մետաղե բռնակով։ Կոչվում է նաև երգեհոն, աղջիկ, ծնծղուկ, ծիծեռնակ, ծընգըլիկ։ Տրամ.՝ 11—13 սմ, բարձրութ.՝ 5—7 սմ, ընդհանուր բարձրութ.՝ 18—20 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 2660, 2663)։

Դմբեբաձև ծնծղաներն են՝

ա) Փոքր-ինչ երկարավուն, որպես բռնակ ծառայող գմբեթաձև գլխիկով, որը պտուտակով ամրանում է զանգակաձև իրանին։ Գլխիկն ավարտվում է փոքրիկ, հարթ, կաշեփոկի համար անցք արած ելուստով։ Կոչում են նաև երգեհոն, մանչ, մղղսու զանգ, ձընձըրղա (միակ)։ Տրամ.՝ 8—9 սմ, բարձրութ.՝ 9—10 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 2734)։

բ) Զանգակաձև, իրանի գագաթը կենտրոնում աստիճանաբար դեպի վեր ձգվելով նմանվում է կոնաձև գմբեթի, որի վրա կաշեփոկի համար բացված անցք կա։ Անվանում են նաև երգեհոն, մանչ, մղղսու զանգ, ծնծաղ (միակ)։ Տրամ.՝ 8—9 սմ, բարձրութ.՝ 5—6 սմ (տե՛ս ՀՊՊԹ, № 6120)։

Բացի վերոհիշյալ տարբերակներից, ծնծղաները հաճախ հանդիպում են նաև այլ հարվածային նվագարանների հետ համակցված։ Դրանք են.

ա) Ծնծղայավոր դափ (նվագարանի փայտյա շրջանակին զույգերով ամրացված զիլերով)։ Նվագում են հարվածելով կամ թափահարելով։ Հայտնի է նաև որպես գափ, դաֆ, դեֆ, ծաղրածուի դափ, թափառաշրջիկի դափ, բոշի դաֆ, մայմունի դաֆ։ Զիլերից յուրաքանչյուրի տրամ.՝ 3—7 սմ, դափի տրամ.՝ 23,5—25 սմ, բարձրութ.՝ 5 սմ (տե՛ս ՀԱՊԹ, № 2518/3)։

բ) Ծնծղայավոր թմբուկ (մեծ թմբուկի գագաթին ամրացված մեծ, հարթ, կամ միջին չափսի զույգ, կամ միակ ծնծղայով)։ Կոչում են նաև դրմփագ, թրմբաղ, ծրմփագ։ Ծնծղայի տրամ.՝ 20—40 սմ, թմբուկի տրամ.՝ 54 սմ, բարձրութ.՝ 34 սմ։

Ըստ ձայնի արտաբերման եղանակի կարելի է տարբերակել հարվածի, թափահարման, միմյանց քսելու միջոցով հնչող ծնծղաներ, որոնք հանդիպում են կոնկրետ լարվածքով և չլարված՝ աղմկող և հնչուն ծնծղաներ։ Հարկ է նշել նաև, որ ծնծղայի ձայնի արտաբերման եղանակը հաճախ կախված է կատարվող ստեղծագործությունից, նվագողի նախասիրությունից ու վարպետությունից, քանի որ նույն ծնծղան կարելի է տարբեր կերպ հնչեցնել։ Օրինակ, հարթ, զույգ ծնծղաները կարելի է և՛ հարվածել, և՛ միմյանց քսելով հնչեցնել, կենաց ծառ հիշեցնողները՝ հարվածելով ու թափահարելով, իսկ մետաղե բռնակով գմբեթաձևները՝ միայն հարվածի միջոցով, քանի որ նրա համեմատաբար ծանր, ձուլածո իրանը քսելիս չի հնչում, իսկ մետաղե միատարր բռնակն արգելում է թափահարելու հնարավորությունը։

Ըստ պատրաստման տեխնիկայի ծնծղաները լինում են երեք տիպի.

ա) Ձուլածո՝ ինչպես կիսագնդաձև ու գմբեթաձև (մանչ ու աղջիկ) ծընծղաները, որոնք պատրաստվում են համապատասխան կաղապարներով.

բ) Կոփածո կամ ծեծած՝ կենտ ու զույգ հարթ ծնծղաները, որոնք պատրաստվում են մեկ ամբողջական կտոր պղինձը կամ բրոնզի շիկացած համաձուլվածքը ծեծելով և աստիճանաբար նվագարանի տեսք տալով[10].

գ) Առանձին մետաղալարերը փաթաթում են, ծնծղայի ձև տալիս, ապա

---

10 Հարկ է նշել, որ շիկացած, կրակով սրբագործված մետաղը և դարբինը՝ այսաեղ ծնծղայագործ, դիցաբանության մեջ ուղղակիորեն առնչվում են երկնային ուժերին՝ արևին, կայծակին ու ամպրոպին և դառնում դիցաբանական կերպարներ, իսկ այս եղանակով պատրաստվող ծնծղաները ժողովրդի մեջ ընդունված է անվանել արև կամ նվագարանը նկարագրելիս այն անմիջապես համեմատում են արևի հետ։ Նվագարանի մոգական-դիցաբանական հատկանիշներին կանդրադառնանք ստորև։

մշակում որոշակի չերմաստիճանում։ Այս եղանակով պատրաստված ծընծղայի ղողանջն ավելի հնչեղ ու երկարատև է լինում։ Նվագարանի պատրաստման այդ եղանակը մինչև օրս էլ կիրառվում է Թուրքիայում և ԱՄՆ-ում՝ հանրահայտ «Ավետիս Զիլճյան» ֆիրմայի կողմից։ Ի դեպ նշենք, որ XIX դարի կեսերից սկսած, Արևմտյան Հայաստանում (Սամաթիա) Քերոփբե Զիլճյանից սերնդե-սերունդ փոխանցվեց ծնծղաների համաձուլվածքի ու ձուլման չերմաստիճանի գաղտնիքը, և արդեն շուրջ երկու հարյուր տարի, նրանց պատրաստած նվագարանները համարվում են աշխարհում լավագույններն ու բազմիցս մրցանակների արժանանում համաշխարհային ցուցահանդեսներում[11]։ Մասնագիտական գրականության մեջ դրանք հայտնի են որպես piatti, cinelli (իտալ.), Becken (գերմ.), cymbals (անգլ.), cymbales (ֆրանս.), κύμβαλον (հուն.), тарелки (ռուս)[12]։

Ծնծղաների պատրաստման հումքը ևս տարբեր երկրներում ու ժամանակներում տարբեր է եղել. քար, փայտ, ընկույզի կեղևներ, ոսկր, պղինձ, բրոնզ, արծաթ, ոսկի, մետաղի համաձուլվածք։ Հայկական լեռնաշխարհի տարածքից հայտնաբերված զույգ, հնադույն բրոնզե ծնծղաները, որ գտնվել են Կարմիր Բլուրի պեղումներից, թվագրվում են մ. թ. ա. VII դարով[13]։

Հայոց առաջին ձեռագիր մատյանից մինչև օրս, դրական և ժողովրդախոսակցական լեզուներում օգտագործվում է ծնծղաների տարբեր տիպերի ու տեսակների շուրջ երկու տասնյակ անվանում[14], որոնք հիմնված են նվագարանի երեք հիմնական հատկանիշների վրա.

ա) Զայնի արտաբերման՝ ցընցելի, ցընձղակ, ձրնձրղա, ցնցել բայի բառային ձևերից[15]։

բ) Հնչողության՝ զիլ, ցրմցրմ, ցրմպապա, ծրնծղիկ, ծրնգծրնգիկ, ծնգչիկ, ծրնծղուկ, ծնծղա, ցրնցղա, ցրնձղա[16]։

---

11 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 5, Երևան, 1974, էջ 645։

12 Музыкальная Энциклопедия, т. 5, М., 1981, с. 442. Մասնագիտացված նվագախմբերում ծնծղաների տարբեր տիպերի կառուցվածքի ու կիրառման մասին տե՛ս А. Н. Паиаиотов. Ударные инструменты в современных оркестрах. М., 1973, с. 70—80.

13 Է. Խանզադյան. Հայկական հին երաժշտական գործիքները.— Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ. հ. 5, Երևան, 1959, էջ 64։ «Ծնծղաներից մեկը համարյա ամբողջական է, միայն եզրն ու բռնակի տեղն է մի փոքր մաշված։ Այն բաղկացած է երեք մասից՝ շրջանաձև սկավառակից, միջին մասում կիսագնդաձև գմբեթից և բռնակից։ Բռնակն ամրացված է գմբեթի գագաթին։ Հարթ մասի շառավիղը 4,5 սմ է, տրամագիծը 9 սմ, ամբողջ ծնծղայի տրամագիծը 18 սմ է։ Երկրորդ ծնծղան, որ գտնվել է առաջինի հետ միասին, նույն չափերն ունի և առաջինի զույգն է կազմում, բայց շատ խիստ քայքայված է, պահպանվել է միայն քառորդ մասը»։

14 Տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 2, Երևան, 1973, էջ 465։ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. հ. Ա, Երևան, 1979, էջ 1020։ Հ. Աճառյան. Քննություն Վանի բարբառի. Երևան, 1952, էջ 268։ Հ. Աճառյան. Քննություն Առտիալի բարբառի. Երևան, 1953, էջ 271։ Ռ. Բազրամյան. Դերսիմի բարբառային քարտեզը. Երևան, 1960, էջ 85։ Գ. Շերենց. Վանա սազ. Թիֆլիս, 1885, էջ 175։ Տ. Մկունդ. Ամիտայի արձագանքներ. Նյու Յորք, 1950, էջ 447։ Մ. Օրմանյան. նշվ. աշխ., էջ 121, 143։ Բառարան սուրբ գրոց, էջ 177, 255։ Մատենադարանում պահվող ձեռագրերում ծնծղաների պատկերների մասին տե՛ս Ա. Գրիգորյան. Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում. Երևան, 1973, տախտակ LXIII, ձեռ. № 4778, զույգ հարթ, փոքր ծնծղա, Արճեշ, 1462 թ. Ավետարան, ծաղկող՝ Կարապետ, տախտակ XVII, ձեռ. № 4883, ծնծղայավոր գոտի, Կտուց անապատ, 1462 թ., Հայմավուրք, ծաղկող՝ Մինաս։

15 Ըստ Հայկազեան բառարանի, օնծղայի հունական անվանումը ևս առաջացել է ցնցել բայից՝ կիմվալոն (հ. Ա, էջ 1020)։

16 Ըստ Աճառյանի, ծնծղայի արաբական, ասորական և եբրայական անվանումների հիմքը եբրայերեն հնչել բայն է՝ Sall, այստեղից էլ՝ ցելցելիմ, ծելծելիմ, շալշալիմ անունները (Արմատական բառարան, հ. 2, էջ 465)։

գ) Նվագարանի կառուցվածքի՝ ունելի, մաշա, զիլի մաշա, մանչ, աղչիկ։ Վերջին տարիներին, հազվադեպ, կիրառվում է նաև ափսե անվանումը, որն ուղղակիորեն ռուսերենի тарелки ձևի թարգմանությունն է և օգտագործվում է ռուսական կրթություն ունեցողների շրջանում։

Դեռևս գրավոր աղբյուրներից հայտնի է, որ ծնծղաները թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր տոների, ծեսերի ու արարողությունների ժամանակ կիրառվել են իբրև «ցնծության նշանակ»[17], սակայն սա նվագարանի բազմաբնույթ կիրառության միայն մի կողմն է։ Փորձենք դիտարկել ծնծղան ըստ ազգագրական նյութերի։

1. Ռազմի դաշտում և որսի ժամանակ ծնծղաների (մեծ, հարթ) արձակած հզոր ձայնն ու աղմուկը խուճապի է մատնել թշնամուն ու գազաններին։ Ուշագրավ է, որ հակառակորդի զորքը հանկարծակիի գալով, այդ աղմուկը համեմատել է դժոխքի ու սատանաների հետ (դժոխային ժխոր, սատանայական խրախճանք) և լեղապատառ փախել։ Հիշյալ դեպքում օգտագործվել են չլարված, հարթ, մեծ ծնծղաները՝ թմբուկների, մեծ զուռնաների ու փողերի (մետաղե, փայտե) հետ[18]։

2. Տոնական ու ծիսական պարերի ժամանակ մատների փոքր ծնծղաների հնչյուններն ընդգծել են երաժշտության ռիթմիկ պատկերն ու միաժամանակ ունեցել չարխափան նշանակություն[19]։ Մեր-օրերում այս ծնծղաներին երբեմն փոխարինում են բութի և միջամատի շփումից առաջացող հարվածներն ու այդ երկու մատներին հագցվող ապակե կամ մետաղե փոքրիկ բաժակները[20]։

3. Եկեղեցական երաժշտության մեջ, հատկապես հոգևոր երգեցողության ժամանակ, միջին և փոքր չափսերի զանգակաձև ծնծղաները յուրօրինակ կամերտոնի դեր են կատարել[21]։

4. Թեև եկեղեցական կարգում ծնծղան, քշոցը կամ զանգը խորհուրդ չունեն և չեն օծվում, այլ եկեղեցում օգտագործվող ու նվեր տրվող բոլոր առարկաների նման միայն օրհնվում են, ժողովուրդը եկեղեցական ողջ սպասքի, զանգերի, քշոցների հետ միասին, սրբացրել է ծնծղաները ևս ու համարել եկեղեցուն մատուցված ամենահարգի ու արժեքավոր նվերներից, որի մասին վկայում են նաև նվագարանների արձանագրություններն ու բանասացների վկայությունները[22]։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ եկեղեցուն ծնծղա, քշոց, զանգ նվիրելը նպատակին հասնելու, բուժման ակնկալությամբ արված զոհաբերության՝ մատաղի ձևերից մեկն է համարվել, այն տարբերությամբ, որ չար գործ կատարած մարդիկ (քրիստոնեական պատվիրաններն անարգողները) չէին կարող առանց մեղքը քավելու նը-

---

17 «Ծնծղայի կիրառությունն ընդհանուր է մեր եկեղեցվո մեջ, ոչ թե լոկ իբր երգեցողության ու ձայնի կանոնավորության նպաստող գործիք մը, այլ և իբր ցնծության նշանակ, ուստի լուր օրեր ծնծղա չի լսվիր, ե տոնախմբության մեջ կհնչեն, և այնչափ ավելի, որչափ տոնախմբությունը մեծ է...» (Մ. Օրմանյան. նշվ. աշխ., ծնծղա)։

18 Հ. Պիկիչյան. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Նոր Նախիջևան 1982, Շիրակ 1982, Ջավախք 1985։

19 ԴԱՆ, Երևան 1980 (հայրենադարձներից), այս մասին համեմատական նյութեր կան Ս. Ս. Լիսիցյանի «Старинные пляски и театральные представления армянского народа» (Ереван, 1958, т. 1. с. 140) աշխատությունում։

20 ԴԱՆ, Երևան 1980 (հայրենադարձներից), Շիրակ 1982։

21 Մ. Օրմանյան. նշվ. աշխ., (ծնծղակ)։

22 ԴԱՆ, Ուտիք 1985, Երևան 1980. տե՛ս Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերում պահվող №№ 2650, 2652, 2659, 2663, 2734, 2735, 2736, 2737, 2741, 2743, 2746, 4255, 4254, 9294 ծնծղաները։ Ծնծղան հեղինակության, հարստության, հաստակության մեջ գրված բարձր դիրքի նշան է համարվել նաև Արևելքի այլ ժողովուրդների մոտ, որի մասին ավելի մանրամասն տե՛ս Г. Г. Стратанович. Народные верования населения Индокитая, М., 1978, с. 192.

ման զոհաբերություն անել, քանզի այն անընդունելի ու պիղծ էր համարվում։ Եկեղեցուն ծնծղա նվիրելու ամենատարածված ու ընդունելի միջոցը մահտեսի լինելն էր, այսինքն Երուսաղեմ ուխտ գնալուց հետո[23]։ Նույն վկայությամբ, ծնծղաները եկեղեցուն նվիրում էին «ի հիշատակ», «ի բարեխոսություն», «ի քավություն մեղաց» և «ի փրկություն հոգվո»։ Այս առումով դրանք ուղղակիորեն համեմատելի են խաչքարերի հետ։ Սակայն եկեղեցուց դուրս, ժողովրդական կենցաղում, հավատալիքներում, մոգական, հմայական, կախարդական արարողություններում հատկապես ընդգծվել է ծնծղայի չարխափան ուժն ու նշանակությունը և նվագարանի տարբեր տեսակներին ու նրանց արձակած ձայնին վերագրվել են տարբեր հատկություններ։

Ա. Մոգություն ձայնի միջոցով.

ա) Ծնծղայի ձայնին վերագրվում է խավարը վանելու հատկություն. ըստ ժողովրդական պատկերացումների «խավարումը կառաջանա չար վիշապի պատճառով, որ կուզե կուլ տալ արեգակը, խավարման ժամանակ հրացան կարձակեն և ծնծղաներ կզարկեն՝ չար վիշապը փախցնելու համար»[24]։ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Կան տեղաց տեղաց բնակիչք, որք հրացաններով ու դղրդոցներով կ՝փախցունեն մեր լուսոյ դեմը բռնողներն. ոմանք ևս ջերմեռանդ և ողոքավոր ձայնիվ Տեր ողորմեա կըսեն, պղնձե ամաններ և ծնծղաներ հնչեցնելով։ Աստված կկանչեն, որպեսզի խավարման չար հետևանքներեն, զոր կգուշակեն, ազատե զիրենք։ Այս սովորությունը, ինչպես նաև մեկալ բաներն ալ միայն Վանա մեջ չեն, այլ շատ գավառներու մեջ կտեսնվին. մինչև՝ ի Թիֆլիզ ևս ասկե 12 տարի առաջ տեսանք...»[25]։

բ) Չար ուժերը քշելու հատկություն. Ջավախքում պահպանված սովորության համաձայն, եկեղեցուց դուրս գալիս նորապսակներին ուղեկցում են Ծնծղայի հնչյուններով[26], որպեսզի չարերը հեռու մնան, չմոտենան և փախչեն։

գ) Նյարդային հիվանդությունները բուժելու հատկություն. այս նպատակով ժողովրդական բժիշկները հանձնարարում են երկու տարբերակ.

1) Նյարդային հիվանդին պարացնում են ծնծղաների (փոքր, մատների զիլեր) ռիթմիկ ղողանջի տակ, որը հանգստացնում է նյարդային համակարգը[27]։

2) Ծնծղաներով աղմուկ են հանում, որ հիվանդի որովայնում թաքնված դևը կարծի, թե յուրայիններն են եկել խրախճանքի ու դուրս գա[28]։ Այս իրավիճակում առաջացած ուժեղ աղմուկից նյարդային հիվանդն աստիճանաբար շոկի մեջ է ընկնում, արագանում է շնչառությունը, ապա միանգամից լից-

---

23 ԴԱՆ, Երևան, Ուտիք, Ջավախք, Շիրակ։ Երուսաղեմ ուխտ գնացողները սովորաբար այնտեղից որևէ ընծա էին բերում իրենց եկեղեցուն, որպես հիշատակ, կամ գալուց հետո սեփական ձեռքով նվեր պատրաստում կամ պատվիրում։

24 Բենսե. Բուլանըխ կամ Հարք գավառ.—Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 31։ Արևի կամ լուսնի խավարման ժամանակ ծնծղաներ հնչեցնելու սովորության մասին տե՛ս Գ. Սրվանձտյանց. Մանանա. Կ. Պոլիս, 1876, էջ 113։

25 Ե. Լալայան. Ջավախք.—ԱՀ, գիրք Ա, Շուշի, 1895, էջ 259։ «Հարսանյաց ավանդական ծեսի ընթացքում առանձնահատուկ նշանակություն էին տալիս ծնծղայի օգտագործման երևույթին (մղդսու ղանդ) Փերիթայում և Ջհարմհալում։ Ծնծղայով, ձեռքի զանգի քաղցր ղողանջներով նվագակցել են հարսանիքներին, եկեղեցուց դուրս գալուց առաջ, «Արեգակն արդարության» շարականին զուգընթաց և մկրտած մանկանը տուն տանելիս, դարձյալ ճամփին»,— գրում է բանահավաք Ծատուր Ջարգարյանը «Հայ ժողովրդական նվագարաններն Իրանահայքում» անտիպ հոդվածում, հեղինակի անձնական արխիվ, էջ 8։

26 ԴԱՆ, Ջավախք 1982, Ուտիք 1985։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

քաթափվում է ու հանգստանում (հմմտ. ղուռնա-դհոլի նվագով հիվանդին բուժելու հետ)[29]։

դ) Մննդաբերությունը թեթևացնելու նպատակով ևս կիրառվում է երկու տարբերակ.

1) Մատների ծնծղաների մեղմ ձայնով հրապուրում են նորածնին, որը, հրեշտակների դասին պատկանելով, արագորեն դուրս է գալիս յուրայիններին միանալու[30] (հմմտ. մեծ ծնծղաներին վերագրվող սատանայական հատկությունների ու ձայների հետ)։

2) Ըստ ժողովրդական պատկերացումների, յուրաքանչյուր ծննդաբերության ժամանակ ծննդկանի ուսերի մոտ կանգնած են հրեշտակն ու սատանան (համապատասխանաբար աջ ու ձախ կողմերում) և երբ սատանան ուզում է խլել նորածնին՝ խեղդելու, սպանելու նպատակով, ծննդաբերությունը դժվարանում է։ Սակայն ծննդկանի վիճակը կարելի է թեթևացնել մեծ ծնծղայի ուժգին հարվածներից առաջացած ձայնի միջոցով[31]։

ե) Հոգևոր ծիսակարգում ծնծղան հատկապես օգտագործում են տոների և ծիսական արարողությունների ժամանակ, ինչպես Ծաղկազարդի կիրակի երեկոյան, Դոնբացեքի ծեսին՝ Մեծ պասի ընթացքում, երբ ժամերգությունում արտասանվում են «Բա՛ց, մեր դուռը ողորմութեան...» խոսքերը և երեք անգամ խփում ծնծղաները, որից հետո միայն բացվում է վարագույրը (հմմտ. դուռը բացելիս չար ուժերին վանող մոգական հատկությունների, ինչպես նաև հինդուսական տաճարներում ընդունված ձայնով, գոնգով, զանգով կամ ծափով Տիրոջ ուշադրությունը հրավիրելու սովորության հետ)։ Ծնծղա էին զարկում նաև նույն տոնի առավոտյան ժամերգության ժամանակ[32]։

Սրբուհի Լիսիցյանը նշում է, որ հոգևոր արարողությունների ընթացքում որոշակի շարականներ կատարելիս օգտագործում են մեծ, կրկնակ ծնծղաներ, որոնք ռիթմով հնչեցնում են մեկ կամ երկու տիրացու, ինչպես նաև միակ մեծ ծնծղա (տրամ.՝ 40 սմ), որը նվագում են ծայրին կտոր փաթաթած 30 սմ երկարությամբ կաղնեփայտե ճիպոտով։ Այսպիսի ծնծղաները պատրաստվում էին արծաթի համաձուլվածքից։ Ըստ բանասաց Ապել Նազիկյանի, Փոքր Հայքում այն կոչվում էր երգեհոն։ Ըստ Արշակ Բաբայանի Հայոց Զորում (Վասպուրական) միակ ծնծղան անվանվում էր դամ, իսկ Ալաշկերտում՝ ըստ Արշակ Սարդայանի, ձանձաղ։ Հոգևոր արարողությունների որոշակի պահերին քշոցը, կրկնակ ծնծղաներն ու միակ ծնծղան միասին հնչում են՝ չար ուժերին երիցս քշելու, փախցնելու նպատակով[33]։

Բ. Ծնծղաներին վերագրված հատկությունների երկրորդ խումբը, ի տարբերություն առաջինի, կապվում է նվագարանի հետ և այս դեպքում արդեն նվագարանը, ձայնից անկախ, դառնում է մոգական գործիք, միջոց։

ա) Չարը մեկից հանելու և մյուսին ուղարկելու համար անհրաժեշտ է չարոց թուղթը՝ թուղթ ու գիր, զույգ կիսագնդաձև ծնծղաների մեջ գցել ու հակառակ ուղղությամբ պտտեցնել (դեպի ձախ), անընդհատ կրկնելով անհրաժեշտ մոգական խոսքերը (վերջիններս ասերգային բնույթի բանաձե-

29 ԴԱՆ, Երևան 1980, Նիրակ 1982։

30 ԴԱՆ, Երևան 1980, Արագածոտն 1985։

31 ԴԱՆ, Ուտիք 1985, Նիրակ 1982, Արագածոտն 1985։

32 Նյութը գրանցվել է Ախալցխայի հայկական եկեղեցու քահանա Ռուբեն Սազոյանից, 1982 թ.։ Ըստ էջմիածնում ծառայող քահանա Արտակ Սիմոնյանի, պատերազմից հետո էջմիածնում Ծաղկազարդի նույն ծեսի ժամանակ ծնծղայի փոխարեն բանալիով փայտին էին խփում՝ երկնային դռանը նմանակելով։ Հոգևոր ծիսարանում ծնծղայի տարբեր տիպերի և դրանց կիրառությունների մասին տե՛ս Բառարան սուրբ գրոց։

33 С. С. Лисициан. Указ. соч. с. 140—142

վերն են)։ Նման եղանակով կարելի է վատ գիրն ուղարկել չարակամին՝ թուղթ ու գիր անողին[34]։

բ) Չարքերին, չար ուժերին ոչնչացնելու համար անհրաժեշտ է կախարդական պարի ընթացքում ծնծղայավոր դափով կամ մեծ ծնծղայով հարվածել չար ոգուն[35]։

գ) Կապ գցել, կապը քանդել. հայտնի է, որ հայոց հարսանեկան ծեսում հարազատներն աչալուրջ հետևում են, որ չարակամներից որևէ մեկը փեսային կապ չգցի (կախարդանքով առնականությունից զրկել) և դրա դեմ զանազան միջոցներ են կիրառվում. օրինակ, եղմորթեքի ժամանակ բանալին թաթախում են մսացուի արյան մեջ և կողպեքը կողպում՝ բացելով միայն առագաստ մտնելուց առաջ[36]։

Ինչպես փեսացուին, այնպես էլ ընդհանրապես տղամարդկանց (երբեմն նաև կանանց) կապ գցելու նպատակով «աղջիկ» կոչվող զանգակաձև կամ կիսագնդաձև ծնծղայի կաշեփոկի օղակն անցկացնում են «մանչ» կոչվող գմբեթաձև ծնծղայի մետաղյա սրածայր բռնակի միջից, պտտում, հանդուցում և մոգական խոսքեր ասում, իսկ կապը քանդելու համար մի երրորդ (մանչ, գմբեթաձև) ծնծղայով քանդում են երևակայական հանգույցը և հարվածում կոկոսի ընկույզի կեղևից պատրաստված ծնծղայով[37]։ Ամենայն հավանականությամբ սա նմանողական մոգության օրինակ է։

Թեև դարեր շարունակ քրիստոնեական եկեղեցին հալածանքի էր ենթարկում ու պայքարում գյութողների, հմայողների, վհուկների, մոգերի ու կախարդների դեմ, սակայն մինչև մեր դարի կեսերին էլ, բանասացների վկայությամբ, Հայաստանի տարբեր շրջաններում կարելի էր հանդիպել նրանց ծպտված հետևորդներին։ Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ նվագարանների միջոցով, հատկապես ծնծղաներով կատարվող մոգական արարողությունների մասին տեղեկություններ հաղորդելիս (Շիրակ, Արագածոտն, Ջավախք, Ուտիք), բանասացները նախ խաչակնքում էին, կարծես ներում հայցելով իրենց անմաքուր արարքի համար, ապա դժվարահաճությամբ պատմելով՝ հրաժարվում կոնկրետ անուններ տալուց, բացատրելով, որ չեն ուզում շարշարել հանգուցյալների հոգիներին։ Ուտիքում, օրինակ, ճանաչված գուշակներից մեկը, որ նաև վհուկի համբավ էր վայելում, հավատում էր, որ նման մոգական արարողություններ անողների անունները չի կարելի տալ, քանի որ նրանց տերերը կապված են այն աշխարհի հետ և անունը տալով կարելի է անզգուշաբար հրավիրել նաև մութ ուժերին։ Սա է հավանաբար նաև պատճառը, որ նվագարաններով կատարվող մոգության տարբեր ձևերի ու դրանց կատարողների մասին այդքան սակավ ու կցկտուր տեղեկություններ են հասել մեզ։

Ծնծղաների զարգանախշերի (խաչեր, ոճավորված բուսանախշեր, թեք դծանախշեր, շրջագծեր) ժողովրդական մեկնաբանությունները ևս նվագարանը կապում են չար ու բարի ուժերի պայքարի, կյանքի փակ շղթայի շրջանի, կյանքի հարատևության, անձրևի ու կայծակի գաղափարների հետ[38]։ Օրինակ, ծնծղաների ամենատարածված զարդանախշը՝ շրջանաձև եզրագոտին, համարվում է մոգական շրջան, որն անձեռնմխելի է ու անհասանելի չար ուժերին և միայն կոտրված կամ ճաքած ծնծղան կարող է կորցնել մոգական ուժն ու վնասվել չարից։ Ճաքած ու կոտրված ծնծղաները համարվում են չարի դեմ պայքարում վնասված, հավատում էին, որ ծնծղան իր վրա է վերցրել վտանգը և տիրոջը՝ եկեղեցուն, տունը կամ մարդուն

34 ԴԱՆ, Ուտիք, Արագածոտն, Շիրակ։

35 ԴԱՆ, Ուտիք։

36 Ե. Լալայան. Նոր Բայազետի գավառ.—ԱՀ, գիրք 16, Թիֆլիս, 1907, էջ 18։

37 ԴԱՆ, Ուտիք, Ջավախք, Շիրակ։

38 ԴԱՆ, Երևան, Շիրակ, Արագածոտն, Ուտիք, Ջավախք։

գերծ պահել կամ փրկել չարից։ Այսպիսի ծնծղաներին արժանի պատիվ էին տալիս, սրբացնում ու պահում էին մասունքների շարքում[39]։

Ինչպես արդեն նկատելի է շարադրվածից, հայկական ծնծղաները թե՛ իրենց ձևով (հմմտ. կիսագնդաձև ու գմբեթաձև ծնծղաները զանգերի հետ, թակիչով, հարվածվող ընկուզե և թաթով հարվածվող մետաղե ծնծղաները՝ փայտե, քարե, մետաղե գոնգերի, շամանի թակիչով դափի հետ), թե՛ կառուցվածքով (հմմտ. կենաց ծառի տիպի զիլերը՝ տիեզերական ծառի պատկերով շամանի դափի հետ, որի միջոցով շամանը ճանապարհվում է այն աշխարհ՝ հիվանդի հոգին հետ բերելու) և թե՛ ձայնային հատկանիշներով (չարխափան ուժ), միավորվում են աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ տարածված ընդհանուր աղմկային-հարվածային նվագարանների ընտանիքում, ինչպես բոժոժները, չխչկանները, զանգերը, կարկաչանները, կաստանետները, քշոցները, դափերը, թմբուկները և իրենց հնադույն՝ նախնական իմաստով, ունեն չարխափան նշանակություն։

Մեր օրերում, ցավոք, ծնծղաները դուրս են մղվել ժողովրդի կենցաղից և եկեղեցուց[40]։ Մասնագիտացված երաժշտախմբերում՝ սիմֆոնիկ, փողային, կամերային, հնադույն նվագարանների, ծնծղաները դիտվում են արդեն իբրև եվրոպական պրոֆեսիոնալ նվագարաններ և Հայաստանում ասանվանվում են piatti, ցիմբալ, կիմվալ, կրոտալի, тарелки, մինչդեռ, կարծում ենք ավելի ճիշտ ու բնական կլիներ մեզ մոտ դրանք կոչել հայոց լեզվին հարազատ ու դարերից ավանդված անուններով։

ЦНЦХА: МУЗЫКАЛЬНЫЙ И МАГИЧЕСКИЙ ИНСТРУМЕНТ

Р. В. ПИКИЧЯН

Резюме

Цнцха (cnela)—распространенный в Армении музыкальный инструмент семейства piatti (тарелок), относящийся к ударно-шумовым. По форме цнцха бывают плоскими, полусферическими (подобно колоколу) и куполообразными. Встречаются одинарные и парные, в зависимости от размера—большие, средние и малые цнцха. Звук извлекается посредством удара, встряхивания или прикосновения цнцха друг к другу. По типу звучания различают цнцха, настроенные на определенную высоту, и без настройки (шумовые). Материалом для изготовления цнцха мог быть камень, дерево, ореховая скорлупа, кость, медь, бронза, серебро, золото и особые сплавы металлов. Металлические цнцха изготавливаются посредством литья, ковки или специальной тепловой обработки скрученной проволоки. Древнейшее цнцха, обнаруженное на Армянском нагорье, относится к VII веку до н. э. (Кармир блур). В литературном языке и в разговорных диалектах имеется около двадцати терминов для обозначения цнцха соответственно их строению, типу извлечения звука или зву-

---

39 ԴԱՆ, Երևան, Արագածոտն, Շիրակ։

40 Եկեղեցում ծնծղայի կիրառումն այնքան է մոռացվել, որ էջմիածնում, ո՛չ Մայր Տաճարում, ո՛չ Թանգարանում և ո՛չ էլ Գանձատանը մեզ չհաջողվեց ծնծղայի որևէ նմուշ գտնել։ Ըստ հոգևորականների բացատրությունների, խորհրդայնացման առաջին տարիներին, երբ սկսվել է հալածանքը կրոնի նկատմամբ, եկեղեցական ողջ սպասքը, այդ թվում նաև ծնծղաները, խլվել են եկեղեցուց և լավագույն դեպքում հանձնվել թանգարաններին։ Սրանով, հավանաբար, պետք է բացատրել, որ Հայաստանի պատմության պետական թանգարանում են հայտնվել տարբեր վանքերից ու եկեղեցիներից բերված ծնծղաների շուրջ քառասուն նմուշ, որոնց ուսումնասիրությունն էլ մեծապես նպաստեց սույն հոդվածը գրելուն։

чанию. Цнцха нашли многообразное применение в жизненном укладе армянского народа: они используются для подчеркивания ритма музыки, выражения ликования в духовной музыке, и, наконец, являются своеобразным камертоном в церковной музыке Цнцха наряду с церковной утварью также стали священными предметами и как таковые высоко ценились в качестве подношения церкви «для благословения», «во искупление грехов», «во спасение души», «для поминовения», а также использовались на поле брани или во время охоты, чтобы создать шум и навеять панику. Своеобразное применение нашли цнцха также в народных верованиях, различных ритуалах и магических действах, причем им приписывались особые чудодейственные свойства: считалось, что звуками цнцха можно рассеять тьму, изгнать бесов. В таком качестве их применяли при затмении солнца, для облегчения родов или излечения нервных заболеваний. Считалось, что определенные манипуляции цнцха различных форм способствуют устранению всевозможных злых наветов и наговоров или развязывают магические узлы, завязанные с намерением лишить жениха мужской силы. Анализ указанных данных, а также сохранившиеся на цнцха надписи, узоры и их народные толкования свидетельствуют о том, что армянские цнцха своей формой, строением и звуковыми особенностями органично принадлежат к универсальному и широкому классу архаичных ударно-шумовых ритуальных инструментов, куда входят разного рода бубенцы, трещотки, гонги, рипиды, колокола, кастаньеты, шаманские бубны и барабаны. Как и этим инструментам, цнцха издревле приписывали значение пресекающего зло чудодейственного талисмана.